

ԲԱՐՍԵՂ ՄԱՐԱՇԵՑՈՒ ՈՂԲ-ԴԱՄԲԱՆԱԿԱՆԸ

ՀԱԿՈՐ ՔՅՈՍԵՅԱՆ

XII դարի հեղինակ Բարսեղ վարդապետ Մարաշեցին հայ մատենագրության ոչ անհայտ դեմքերից է: Նրա Ողբը հայ դամբանական գրականության համեմատաբար վաղ շրջանի հետաքրքիր նմուշներից է: Այն պահպանվել է Մատթեոս Ուռհայեցու ժամանակագրության շարունակող Գրիգոր Երեցի աշխատության մեջ¹: Ողբը նախապես գրված է եղել որպես ինքնուրույն ստեղծագործություն, սակայն մեզ չի հասել նրա որևէ առանձին ընդօրինակություն: Այս առումով էլ այն հիշեցնում է Դավթակ Քերթոզի հայտնի Ողբի ճակատագիրը:

Այս ստեղծագործությունն առաջին անգամ բնագրով, ֆրանսերեն հանդիպողի թարգմանությամբ, նախաբանով և ծանոթագրություններով հրատարակել է էդ. Դյուլորիեն²: Այնուհետև, մասնակի կրճատումներով, այն հրատարակել է Ղ. Ալիշանը³: Ողբից մի փոքր հատված մեջ է բերել Գ. Զարբհանլյանը⁴: Հեղինակի և երկի մասին այս կամ այն առիթով խոսել են Մ. Զամչյանը⁵, Ն. Պողարյանը⁶, Հր. Բարթիկյանը⁷, Հ. Անասյանը⁸, Աս. Մնացականյանը⁹ և ուրիշներ:

Յավոք, մեզ հայտնի չեն Բարսեղ Մարաշեցու կյանքի մանրամասները, ինչպես նաև՝ Ողբի ստեղծման ստույգ ժամանակը: Գրիգոր Երեցի հաղորդմամբ, Բարսեղ վարդապետը Քեսունի և Մարաշի տեր, խաչակիր իշխան Բալդուինի խոստովանահայրն էր՝ ճաստուածաշնորհ և բանական յոյժ, յերկիւղած յԱստուծոյ և առաքինի ի պահս և յաղօթս, հմուտ Հին և Նոր Կտակարանաց Աստուծոյ»¹⁰, նրա ծննդյան թվականը հայտնի չէ, իսկ մահվանը՝ տրվում է ժամանակագրության վերջում. «Ի փոխել թուականիս մեր ՈԺԱ (1162) մեռաւ ամենագովելին Բարսեղ վարդապետն և թաղեցաւ ի վանքն ի

¹ «Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցոյ». Երուսաղէմ, 1869, էջ 473—500, Մատթէոս Ուռհայեցի, ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 375—395, Մատթէոս Ուռհայեցի, ժամանակագրություն, աշխար. թարգմ., առաջաբան և ծանոթագրություններ Հր. Բարթիկյանի, Երևան, 1975, էջ 252—267:

² «Oraison funèbre de Bandouin comte de Marasch et de Kësoun par Basil, docteur en théologie, son confesseur» (Documents arméniens, t. I. Paris, 1869, p. 203—222).

³ Ղ. Ալիշան, Հայապատում, մասն Բ, Վենետիկ, 1901, էջ 368—370, նույնի՝ Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 231:

⁴ Գ. Զարբհանլյան, Հայկական հին դպրութեան պատմութիւն, Վենետիկ, 1897, էջ 705—706:

⁵ Մ. Զամչյան, Պատմութիւն հայոց, հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 67:

⁶ Ն. Պողարյան, Հայ գրողներ, Ե—Ժ դար, Երուսաղէմ, 1971, էջ 223—225:

⁷ Մատթեոս Ուռհայեցի, ժամանակագրություն, աշխար. թարգմ. առաջաբանը էջ XXIV:

⁸ Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հ. Բ, Երևան, 1976, էջ 1416—1417:

⁹ «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 5, Երևան, 1979, էջ 421:

¹⁰ Մատթէոս Ուռհայեցի, ժամանակագրութիւն, էջ 375 (այս և հետագա հղումները կատարել ենք 1898 թ. հրատարակությունից):

Դրադարկ...»¹¹։ Որ հեղինակը կյանքի վերջին շրջանում կարող էր ապրած և ստեղծագործած լինել Դրազարկում՝ ապացուցվում է նաև «Հաւաքումն մեկնութեան... թղթոցն Կաթողիկէից» գործի հիշատակարանի մի տեղեկութիւնով։ «Զայս դիրս Բարսեղ վարդապետն, անուանի առաջնորդ Դրազարկի սուրբ ուխտին, և տ բերել փափականաւր ի Կոստանդնուպօլսէ։ Եւ մինչդեռ թարգմանէր զսոյն Գրիգոր Դպիր և Լամբրոնս, վախճանեցաւ հայր (Բարսեղ) ... թարգմանեցաւ ի թուին ՌժԲ (1163)»¹²։ Սրանով անկասկած է դառնում, որ ժամանակագրութեան և բերված հիշատակարանի բարսեղները նույնն են¹³, որով էլ պարզվում է, որ Բարսեղ վարդապետն իր կյանքի վերջին, թերևս տասնհինգ տարվա շրջանում, եղել է Դրազարկի հոգևոր միաբանութեան առաջնորդը։ Հանգամանք, որ կարող է լուրջ ու հավաստի վկայութիւնը լինել ողբագիր հեղինակի մտավոր բարձր ձիրքերի և կազմակերպչական կարողութիւններին, մանավանդ որ Դրազարկի վանք-դպրոցը բնորոշվել է որպէս «տեղի իմաստասիրաց և ուսումնասիրաց»¹⁴։ Ելնելով վերոնշյալ դիտարկումից, կարելի է եզրակացնել, թե Ողբի ստեղծման ժամանակ հեղինակը գտնվում էր Դրազարկում։ Դրա համար, թեև որոշ վերապահումով, հիմք կարող են ծառայել Ողբի սկզբում եղած հետևյալ տողերը. «Բարսեղ նուաստ ծառայ գրեմ մեծակական ողբօք... մանաւանդ մերձակայից մերոց՝ Քեսնոյ, Պհեսնոյ, Ռապնայ, Գերմանիկոյ (իմա՝ Մարաշի—Հ. Ք.) և որք ընդ սոքօք գեղք և աւանք և կրօնաստանք...»¹⁵։ Նշված քաղաքներն իրենց շրջակայքով կարող էին «մերձակա» դիտվել Դրազարկի համար միայն։ Այստեղից կարելի է եզրակացնել, որ հեղինակն իր Ողբ-դամբանականը գրել է Դրազարկում¹⁶։

Հենվելով Գրիգոր Երեցի հաղորդած մի տեղեկութեան վրա, կարելի է որոշել երկի ստեղծման մոտավոր ժամանակը։ Ինչպէս հայտնի է, Զանգի ամիրան Եղեսիան (Ուռհան) գրավեց 1144 թ., որից հետո, Գրիգոր Երեցի վկայութեամբ, «Դարձեալ յետ երկրորդ ամաց անցանելոց (1144+2=1146—Հ. Ք.) Ճօսլիսն... զօրաժողով արարեալ առեալ ընդ իւր իշխանն զՊաղտոյնն (Բալդուին—Հ. Ք.), որ էր տէր երկուց աշխարհաց Գերմանիկեցոց և Քեսունի, և եկեալ ի քաղաքն Ուռհա՝ հնարիւք ի գիշերի գողացան քաղաքն»¹⁷։ Սակայն քաղաքի վերագրավումից հինգ օր հետո «աստվածամարտ» թուրքերը հարձակվում են քաղաքի վրա, և կատաղի ու անհավասար մարտում սպանվում է Բալդուին իշխանը, որին և նվիրում է իր Ողբ-դամբանականը Բարսեղ Մարաշեցին։

¹¹ Նույն տեղում։

¹² Ն. Ա կ ի յ ա ն, Նևրսես Լամբրոնացի, արքեպիսկոպոս Տարսոնի, կյանքն ու գիտական վաստակները..., Վիեննա, 1956, էջ 278, Գր. Հ ա կ ո ք յ ա ն, Նևրսես Լամբրոնացի, Երևան, 1971, էջ 357, Հ. Ա ճ ա ո յ ա ն, Հայոց անձնանունների բառարան, Ա, Երևան, 1942, էջ 395։

¹³ Այսու դրական սպաստիսան կարելի է տալ Հ. Անասյանի՝ երկու բարսեղների նույնացման վերաբերյալ արտահայտած թեմանույթ մտքին («Հայկական մատենագիտութիւն», հ. Բ, էջ 1417, տող 24—30)։

¹⁴ Գր. Հ ա կ ո ք յ ա ն, Նշվ. աշխ., էջ 32։

¹⁵ Մ ա տ Թ է ո ս Ուռհայեցի, էջ 375։

¹⁶ Որպէս դրազարկեցի Բարսեղ վարդապետը հիշվում է կյանքի վերջին՝ դրազարկյան շրջանում գրած «Ենկարկման շարավանդ» հեղինակ (Ն. Պ ո ղ ա ղ յ ա ն, Նշվ. աշխ., էջ 223—225)։

¹⁷ Մ ա տ Թ է ո ս Ուռհայեցի, էջ 374, նաև՝ «Ժամանակագրութիւն տեառն Միխայելի ասորոց Պատրիարքի», Երուսաղէմ, 1871, էջ 419։

Հիմնվելով Գրիգոր Երեցի այս, ինչպես նաև՝ Գուլիելմոս Տյուրացու մի շարք այլ տեղեկությունների վրա, հարկ է մտածել, որ Բալդուինի սպանությունը տեղի է ունեցել Եդեսիայի երկրորդ գրավումից հետո՝ 1146 թ.: Այսու կարելի է եզրակացնել, որ խնդրո առարկա ստեղծագործությունը գրվել է դեպքի անմիջական ազդեցության տակ՝ 1146—1147 թթ.¹⁸:

Ողբ-դամբանականը նվիրված է օտարազգի մի իշխանի: Մեր կարծիքով, երկի ստեղծման շարժառիթը սոսկ Բալդուինի եղբրական վախճանը չէր, այլ նախ դամբանագիր հեղինակի խոստովանահայր լինելը. վերջինիս բարոյական պարտքն էր անմիջապես արձագանքել իր սիրելի անձնավորության կորստին, «զի մեք,— դառնորեն ափսոսում է Բարսեղ վարդապետը,— ըստ հոգւոյ հոգևորապէս ոգի նորա պահեալ ունեաք զինամ սիրոյ, յորմէ թէ փոքր մի անսացեալ էր նորա մեզ, կենդանի էր այժմ հոգւով և մարմնով»¹⁹, Երկրորդ՝ նրա «հայասիրութունը», որովհետև, Գրիգոր Երեցի հավաստմամբ, ողբացյալը «առաւել սիրէր զազգն հայոց, քան զփռանդաց»²⁰ և խոսում էր «անսայթաքելի լեզուաւ ի բարբառ հայերէն»²¹:

Սրանից զատ կարելի է նկատի ունենալ դամբանագիր հեղինակի նշմարելի «լատինասիրությունը», որ արտահայտվել է ոչ միայն «Հաւաքումն մեկնութեան... թղթոցն Կաթողիկէից» գործի՝ իր իսկ կարգադրությամբ «փռանկերենից» հայերեն կատարված թարգմանության, այլև հենց լատին իշխանի խոստովանահայրը լինելու փաստով: Այս իրողության հետ պետք է կապել, ըստ երևույթին, Ողբ-դամբանականի ներառումը ժամանակագրության Շարունակության մեջ, հանգամանք, որն իր հերթին պայմանավորված էր Գրիգոր Երեցի ընդգծված արևմտյան կողմնորոշմամբ: Եթե Մատթեոս Ուռհայեցին արդեն գիտակցում էր խաչակիրներից ակնկալվող հայրենիքի ազատագրման ռազմաքաղաքական անիրականալիությունը, ապա Գրիգոր Երեցը տակավին մանկունակ հույսեր էր կապում խաչակիրների՝ Արևելք կատարած և դեռ կատարելիք «ազատագրական» առաքելության հետ²²: Պարագա, որ երևում է «փռանկերենի» հասցեին ասված հիացական արտահայտություններից. «...և ազգն արիական, որք են փռանգքն, երրորդ անգամ ելին ի փրկութիւն քրիստոնէից...»²³ կամ՝ «...փոքր շօսլինն, որ մինչ տակաւին ի կամս Աստուծոյ էր՝ մեծ և հաղթող էր ի վերայ ատելեացն Քրիստոսի, որպէս զհայրն իւր, որ յաւուրս իշխանութեան իւրում փառաւորեցաւ յԱստուծոյ և ոչ ի մարդկանէ և ոչ ետ խրամ հատանել յազգս քրիստոնէից»²⁴:

18 Տե՛ս Ս. Պ ա պ ի կ յ ա ն, Հայերը և խաչակիրները («Հանգես ամսօրյա», 1964, էջ 214):

19 Մ ա տ թ է ո ս Ու ռ հ ա յ ե ց ի, էջ 380:

20 Նույն տեղում, էջ 374:

21 Նույն տեղում, էջ 376:

22 Մ ա տ թ է ո ս Ու ռ հ ա յ ե ց ի, Ժամանակագրություն, աշխար. թարգմ. առաջարանը, էջ XXIII:

23 Մ ա տ թ է ո ս Ու ռ հ ա յ ե ց ի, էջ 421: Այս կապակցությամբ բացատրելի չէ և այն, որ Գրիգոր Երեցը կարող է նույնանալ «Հաւաքումն մեկնութեան... թղթոցն Կաթողիկէից» գործի լատիներենից հայերեն թարգմանության հեղինակ Գրիգոր դպրի հետ, որն Աճառյանի կարծիքով նշանավոր մատենագիր Գրիգոր Սկևռացին է (տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 395, Ն. Ակիսյան, նշվ. աշխ., էջ 278):

24 Մ ա տ թ է ո ս Ու ռ հ ա յ ե ց ի, էջ 374:

Ֆրանկ իշխանի խոստովանահոր պարտականությանը, նրա հետ սերտ հարաբերության մթնոլորտում, Բարսեղ վարդապետը միանգամայն բնականորեն կարող էր որոշ հույսեր կապել «փռանկների» արևելյան քաղաքականության հետ: Այս հանգամանքը նման պարագային ըստինքյան բացատրելի է: Պատճառը Գրիգոր Նրեցիի և Բարսեղ Մարաշեցու քաղաքական մտորումների ընդհանրությունն է, որը և, հավանաբար, հնարավոր է դարձրել դամբանականի կետևողումը Մատթեոս Ուռհայեցու ժամանակագրության Շարունակության մեջ:

Միանգամայն ճիշտ է նկատված, որ սույն ստեղծագործությունը «հայ դրականության պատմության մեջ պահպանված նման ժանրի հազվագյուտ նմուշ է»²⁵ և աչքի է ընկնում թե՛ լեզվով, թե՛ շարադրման եղանակով: Եթե հայ մատենագրության մեջ առկա, պատմական բնույթ ունեցող, բոլոր ստեղծագործություններն ազգային-քաղաքական տրամադրություններով տոգորված և իրենց գաղափարագեղարվեստական ընդգրկումներով անհամեմատ պարփակուն բարձրարվեստ գործեր են, ապա դամբանական քնարերգության մեջ իշխող անձնական հույզը, տեղի ունեցած դեպքի նկատմամբ անհատական վերաբերմունքի անմիջականությունը՝ ողբացյալի հոգևոր և ֆիզիկական արժանիքների գնահատման միտվածայնությունն է: Անկեղծ ու մտերմական շնչերը նմանաբնույթ գործերն օժտում է գրական-գեղարվեստական մի շարք արժանիքներով: Դրանք հիմնականում պայմանավորված են տվյալ հեղինակին հատուկ ներանձնական խորհրդածությանը ու մտածողության եղանակով: Ազգային, հասարակական վեհաշունչ հնչեղությամբ տոգորուն ողբական ստեղծագործությունները, որպիսիք են Մովսես Խորենացու, Արիստակես Լաստիվերտցու, Վարդան Հայկազնի, Ներսես Շնորհալու, Գրիգոր Տղայի և այլոց հայտնի ստեղծագործությունները, իրենց գաղափարական խնդիրներով և գեղարվեստական կառույցով տարբերվում են Բարսեղ Մարաշեցու խնդրո առարկա ողբից: Դրական, գեղարվեստական նկարագրով Մարաշեցու ստեղծագործությանը փոքրիշատե մոտ է Դավթակ Քերթոզի Ողբը: Եթե ողբական գրականության մեջ ոճա-արտահայտչական այլևայլ հնարանների կիրառվումը, որ սկիզբ էր առնում տակավին Մովսես Խորենացու հայտնի ողբից, Դավթակի գրչի տակ պերճ, համակող ու տեղ-տեղ նույնիսկ հեթանոս լալիքի շնչեր է ստանում, ապա այլ է Բալդուին իշխանին նվիրված Ողբի պարագան: Առաջինում իշխող կրակոտ հույզը վերջինիս մեջ տեղի է տալիս աստվածաբանական խոհին, որ բազմաթիվ տեղիներում հիմնավորվում է Աստվածաշնչից ուղղակի թե անուղղակի արված վկայումներով: Ողբին հատուկ հուզական ծայրահեղությունները Բարսեղ Մարաշեցու մոտ վերածվում են բարոյագիտական մեղմահոս ավաղումի: Հիրավի. այս երկն իր տեսակի մեջ ինքնահատուկ գծերով օժտված մի ստեղծագործություն է, որ մասնակի ընդհանրություններ ունենալով իր միակ նախորդի՝ Ջվանշիրին նվիրված Դավթակ Քերթոզի Ողբի հետ, այնուամենայնիվ, իր գրական ներհատուկ բնավորությամբ՝ տարբեր է նրանից:

Հետաքրքրությունը մարդկային հուզաշխարհի նկատմամբ, ներհայեցողական ինքնազննումով անհատի հոգևոր էությունը պեղելու և ըստ ամենայնի բարոյական, քնարերգական հողի վրա այն որակելու ձգտումը X—XII դդ.

²⁵ Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, աշխար. թարգմ. առաջաբանը, էջ XXIV:

հայ, և ոչ միայն հայ, գրականության մեջ վերածնունդը կանխորոշող կարևորագույն հայտանիշներից են: Ներանձնական հույզը՝ միահյուսված խցիկային (կամերային) տրամադրության հետ, դամբանականը դարձնում են զուտ անձնական քնարերգության ուշագրավ երևույթներից մեկը: Հենց այս իրականություններով է հատկանշվում և Բարսեղ Մարաշեցու քննվող ստեղծագործությունը: Եվ, այնուամենայնիվ, միայն վերջիններս չէ որ բնորոշում են սույն դամբանականը. Բարսեղ Մարաշեցին իր ստեղծագործությունն որակում է իբրև «գիր խոստովանութեան»²⁶ կամ «բան աղբհալից խոստովանութեան»²⁷: Հոգե-բարոյական այս իրողությունը, ինչպես հայտնի է, անմիջականություն, մարդկային շերմություն է հաղորդում խոսքին: Դամբանագիր հեղինակի կողմից իր իսկ երկի, իբրև «գիր խոստովանութեան», գիտակցումն ու գնահատումը թույլ է տալիս, թեկուզ վերապահորեն, որոշակի աղբհալիք նշմարել քննվող ստեղծագործության և այդ պատմաշրջանում գրական հրապարակի վրա արդեն հայտնի արևելա-քրիստոնեական խորհրդապաշտ քերթության (Գրիգոր Նարեկացի, Սիմեոն Նոր Աստվածաբան) կանոնակարգած պոետիկայի հետ: Սակայն չպետք է մոռանալ, որ գրական, գեղարվեստական այս հնարքն իր էությունամբ ու շահագրգռություններով, վերջին հաշվով, աստվածաբանական հանգամանք ունի, և այսու բարոյակրթական նպատակներ էր հետապնդում²⁸: «...Ձխոստովանութիւնն,— այս կապակցությամբ գրում է նշանավոր մատենագիր Հովհաննես Երզնկացի Պլուզը,— բժշկութիւն է ոգոց, փախուստ է ի դժոխոց, ազատութիւն է ի սատանայէ, յարութիւն է ի մահուանէ»²⁹: Այսպիսով, խոստովանությունը («ամեղքերի խոստովանությունը») միջնադարի իրապայմաններում նպատակ ուներ զորացնել հավատը («ոչ անյուսութեամբ ունէին զսխալանս կամ ի նոսին հաստատեալ անզղջանալի զմիտս»)՝³⁰ և յուրովսանն բարոյակրթել անհատին: Բարոյագիտական սույն տեսության լույսի տակ է թերևս միայն հնարավոր գնահատել դամբանագիր հեղինակի՝ Աստծուն արած հախուռն խոստովանութունները, որոնք հավակնում են ողբացյալ Բաղդուինի մահից հետո անգամ նրա՝ կենդանության օրոք գործած մեղքերը փոքրիշատե մեղմացնել, որով և հավիտենության մեջ հանցանքների թողություն շնորհել: Ահա այս է պատճառը, որ «ախորժեմ ի պատմել դկորուստն և հրապարակագոյժ առնեմ խոստովանութեամբ զյանգումն, ոչ զի խայտառակեցի, այլ զի կատարելապէս աստ զյանցանս մեր և զզաղտնիս ամօթոյ վասն ամաշելոյ ի մարդկանէ՝ անդ հրապարակեալ խայտառակեն այնպիսիքն առաջի հրեշտակաց և մարդկան, արդարոց և մեղաւորաց... ուր ոչ բան և ոչ գործ և ոչ մի մտածութիւն խորհրդոց թագուցեալ ծածկեցի ի յամենատես գիտութենէ Արարչին մերոյ... Իսկ որքան աստ խայտառակեալ հրապարակեմք խոստովանութեամբ առանց ամօթոյ և կեղծաւորութեամբ թագուցանելոյ և պատճառանօք դամօթ բժշկելոյ, որ է ճշմարիտ և կատարեալ խոստովանութիւն... ջնջին և ոչ ևս գտանին ամենայն յանցանքն... որք իմաստու-

²⁶ Խոստովանութիւնն Ուռհայցի, էջ 394 (այս և հետագա բնագրային ընդգծումները մերն են—Հ. Ք.):

²⁷ Նույն տեղում, էջ 385:

²⁸ Հմմտ. Սաղ. ՆԱ 5, Յակ. Ե 15:

²⁹ Հ. Մ. Բաղդուստայան, Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը, Երևան, 1977, էջ 173:

³⁰ Խոստովանութիւնն Ուռհայցի, էջ 384:

թևամբ ըստ այսմ օրինակի կամաւորապէս խոստովանին զմեզս իւրեանց յայսմ աշխարհի»³¹։

Բարսեղ Մարաշեցու դամբանականի բանաստեղծական նկարագրի հատկ-
բորոյցն մեջ նվազ կարևոր չէ և մեկ այլ իրողութիւն, իրողութիւն, որ այսօր
իրավամբ գնահատվելով որպէս գրական, գեղարվեստական հնարանք՝ միջ-
նադարում տրամագծորեն այլ նպատակադրում ուներ։ Խոսքը ողբացյալի ա-
նունից նրա «մեղքերն» ու սխալները իրեն վերագրելու և այսու դրանք առաջին
դէմքով ներկայացնելու՝ դամբանագիր հեղինակի որդեգրած հնարքի մասին է։
Քրիստոնեական վարդապետութեան բարոյա-աստվածաբանական կենտրոնա-
կան գաղափարի («Նա յայն սակս յայտնեցաւ՝ զի զմեզս բարձցէ»—Ա Յովհ.
Գ 5. հմմտ. Ա Տիմոթ. Դ 10, Հռոմ. ԺԵ 3) գեղարվեստական այսօրինակ վեր-
արժարժումը Մարաշեցու կողմից՝ իր հետեւյալ հիմնավորումն է ստանում.
«...զիսելով զտկարութիւն սիրեցեալ իշխանին՝ հրապարակեմ ի լուր հանուրց
և արձանացուցանեմ այսու գրով զսխալանս նորա՝ անձին իմոյ վաւկանելով
զնորայս, քանզի որք ոչ այսպէս սիրեսցեն զսիրելիս իւրեանց, զկնի մահուանն
մոռանալով կամ թագուցանելով զյանցանս նոցա կամ զերախտիս սիրոյ,
շնչաւորք են, յանբանից և մարմնոյն միայն սիրելիք»³²։ Մի այլ տեղ կարդում
ենք. «Հուարուք և ի միտ առէք զսխալանս յանցանաց սիրեցելոյ և փառաւոր
իշխանին, զոր մեք ի դիմաց նորա և բերանով իբր նա»³³ ողբում ենք։ Սիրելի
անհատի «մեղքերի» այսպիսի «սեփականումը» կամ «յուրացումը» առավել
անձնական, սուբյեկտիվ երանգ է հաղորդում շարադրանքին և սրանով որո-
շակիորեն քնարականացնում այն։ Կրոնաբարոյական իր նկարագրի մեջ իսկ
ողբի այսօրինակ քնարականացումը, ինչ խոսք, առավել լայն հնարավորու-
թիւններ է ընձեռում հոգեղնական ինքնավերլուծման, ինքնաբացահայտ-
ման, սեփական կրքերի մասին դիմացինին անկեղծորեն պատմելու համար,
հանգամանք, որ այս ստեղծագործութիւնը դարձնում է ջերմ ու հաղորդա-
կան։ Գեղարվեստապոետիկական համաբնույթ մի հնարանքի կենցաղավարու-
մը բյուզանդական միաստիկ Սիմեոն Նոր Աստվածաբանի (949—1022) օրհներ-
գութիւններից մեկում (ուր, ընկերոջ մահը ողբալիս, բանաստեղծը խոսում է
նրա անունից՝ ողբացյալի մեղքերը իրեն վերագրելով) վկայում է արեւելա-
քրիստոնեական բանավետում տակավին նորամուտ այդ եղանակի սկզբը-
նավորման և տարածման մասին։ Հանգամանք, որ ամենայն իրավամբ դիտ-
վել է իբրև որոշակի շեղում վանական, ճգնական գրաեղանակից և «ավանդա-
կան ճգնականութիւնից» առհասարակ³⁴։ Գրական-գեղարվեստական սույն
երևույթի այսօրինակ գնահատումը նույն հիմնավորմամբ վերագրելի է թվում
Բարսեղ Մարաշեցու քննվող ստեղծագործութեանը ևս։

Ողբական պոետիկայի օրինակարգած ոչ անկարևոր դրույթներից է նաև
«արտասուքի», իբրև մեղքերի քաղութեան պայմանի³⁵, կիրառումն ու կիրառ-

³¹ Նույն տեղում, էջ 380։

³² Նույն տեղում։

³³ Նույն տեղում, էջ 381։

³⁴ Symeon le Nouveau Théologien, Hymnes. Introduction, text cri-
tique et notes par S. Koder, t. I, Paris, 1969, chap. X, ligne 10—12. Այս մասին տե՛ս
Ա. Կաթողանի հաղորդումը՝ «Византийский временник», 1973, № 34, с. 287.

³⁵ Հմմտ. «Երաւո ոգեշահք վասն զղջման և արտասուաց առացեալ Անանիայի սուրբ
և ընտրեալ վարդապետին» («Պատկեր», 1898—1899, Թ տարի)։

ման հնարքը դամբանականում: «Արտասուքը» թափվում է ոչ թե ողբացայի անհույս կորստյան, ինչպես էր հեթանոս լալիքի պարագային, այլ զոհված բարեկամի «մեղքերի թողության» և փրկության համար: Եվ որովհետև «արտասուս լուացումն է մեղաց»³⁶ և «արտասուք հաշտեցուցիկ»³⁷ Աստծո հետ, դամբանագիր հեղինակը ևս «անկեալ արտասուօք»³⁸ իր մեղքերը խոստովանելով իշխանի «բազում արտասուաց արժանի» կորուստն³⁹ է ողբում և բացականչում. «հեղձամղձուկ եղեալ ցնդիմ յարտասուս»⁴⁰:

Խնդրո առարկա ստեղծագործության ժանրային մասնավոր նկարագիրը ճիշտ որոշելու, նրա գեղարվեստական արժանիքներն ըստ ամենայնի գնահատելու տեսակետից նվազ կարևոր և նկատառելի չէ նաև Դիոնիսիոս Բրակացու Քերականության հայ մեկնիչներից Անանունի կողմից տրված «դամբանականի» իբրև «գեոեզմանական» գրատեսակի սահմանումը. «Դամբանական, որ է գերեզմանական...»⁴¹: Դիտարկվող հատկանիշները հնարավորություն են ընձեռում Բարսեղ վարդապետի Ողբ-դամբանականը նկատել որպես իր սեռի մի մասնահատուկ արտահայտություն՝ ներառելով այն հայ միջնադարյան ողբական գրականության մեջ, մասնավորաբար այդ պատմաըջանում ոչ այնքան տարածուն, քրիստոնեական «մահերգ-դամբանականի» կամ «գերեզմանական» կոչվող գրատեսակում: Այս առումով Բարսեղ Մարաշեցու քննվող ստեղծագործության թերևս միակ նախորդը Վարդան Հայկազնի «Տաղ գերեզմանական վասն փոխման... Գրիգորի Վկայասիրի»⁴² խորագրերը կրող դամբանականն է (XII դարի սկիզբ): Վերջինս հավանաբար անծանոթ չէր Բարսեղ Մարաշեցուն, որովհետև թե՛ ժամանակով և թե՛ բնակավայրով (Կիլիկիա) այդ երկու հեղինակները բավականաչափ մոտ են եղել իրար:

Միջնադարյան մտածողների նման մեր հեղինակն էլ մարդկային հասարակության վրա կախված փորձություններն ու մահտարածամերը դիտում է որպես անխուսափելի հետևանք Աստծո պատգամների «քամահրման» և բարոյական համընդհանուր վայրէջքի, քանզի «ոչ փութացայ մինչև զվերջին կորստական զայս խրատ պատուհասի ընկալայ ի Տեառնէ. որովհետև վյառաջագոյն խրատ քաղցրութեան ոչ ի բժշկութիւն համարեցայ...», իսկ մի փոքր ներքև ավելացնում է՝ «ոչ լիշեցի, ոչ զմտաւ ածի՝ մինչև զքաղցրութիւն ողոր-

36 Ե ղ Ն Ի Կ Կ ո ղ ր ա ց Ի, Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826, էջ 300:

37 «Ազաթանգեղեայ Պատմութիւն հայոց», Տփղիս, 1909, էջ 129:

38 Մ ա տ Թ է ո ս Ու ո հ ա յ Ե ց Ի, էջ 379:

39 Խույն տեղում, էջ 381:

40 Հոգերնախոսական այս երևույթի կարևորությունն են շեշտում, օրինակ, Հովհ. Սարկավազն (տե՛ս «Սոփիքը հայկականը», Կ. ԺԷ, Վենետիկ, 1854, էջ 108, 112, 124—125) ու Մեղրիկ վարդապետը (Մատենադարան, ձեռ. 2680, էջ 487ա): Քրիստոնեական պոետիկայի այս ոչ անկարևոր ձևի առաջին կիրարկողներից մեկը թերևս եփեմ Աստրին էր (տե՛ս «Գիրք Աղօթից ասացնայ սրբոյն եփեմի Խորին Աստուծոյ, 2 տպ., Նրուսաղեմ, 1933, էջ 46, 47, 55):

41 Н. А до н ц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, с. 128. Ա. Մ ու ր ա դ յ ա ն, Հունաբան դպրոցը և նրա դերը հայերենի բերականական տերմինաբանության ստեղծման գործում, Նրևան, 1971, էջ 160: Այս կապակցությամբ անդրադառնալով գերմանական միջնադարի գրական ժանրերի խնդրին, Մաքս Վեհրլին ողբի մեջ, ի թիվս նրա մի շարք զրուցումների, գատորոշում է մահերգը կամ մեռելոգը, իբրև այդ ժանրի մի արտահայտություն (տե՛ս Պ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Հայ միջնադարյան պատմական ողբեր, Երևան, 1969, էջ 21): Տակավին, դասական հնադարում, պարսկա-հունական պատերազմների ժամանակ ծնունդ առած այս ժանրի մասին տե՛ս Ա. Մ. Троицкий, История античной литературы, М., 1951, с. 184. Հմմտ. Ա. Մ ու ր ա դ յ ա ն, նշվ. աշխ., էջ 159:

42 Տե՛ս «Բաղմավեպ», 1873, էջ 264—271:

մովսեյան Արարչին ի ցասումն բարկութեան անձին իմոյ դարձուցի»⁴³, կամ՝ «...անշափ և աննհրելի բարկացուցի զքեզ մեղօվք իմովք յաստուածայինս և ի մարդկայինս, կամաւ և ակամայ, խորհրդով, բանիւ և գործով»⁴⁴: Գրական արդեն իսկ քաղաքացիութիւնն ստացած հնարանք էր սա, որ սկիզբ էր առնում Աստվածաշնչում մեծ հեղինակութիւն վայելող Հոբ Երանելու, Երեմիայի Ողբի ոգուց և իր գեղարվեստորեն ալլափոխված անդրադարձումը գտնում Գրիգոր Նարեկացու «Մատյանի», Արիստակես Լաստիվերտցու «Պատմութեան», Ներսէս Շնորհալու «Ողբ Եղեսիոյի», ինչպես նաև՝ հետագայում Բարսեղ Մարաշեցու «սեղծագործութեանը ներծանրային հայեցակետից առավել մոտ կանգնած Առաքել Սյունեցու, Խաչատուր Կեչառեցու, Մկրտիչ Նաղաշի, Հակոբ Ղրիմեցու դամբանական կամ գերեզմանական ողբերի մեջ»⁴⁵:

Ողբ-դամբանականում տեղ են գտել սոցիալական բնույթի մի շարք դիտողություններ: Հեղինակն առաջին դեմքով, հանձին իշխան Բարդուխնի, ներկայացնում է վերջինիս գործած թուր «մեղքերը», որոնց թվում, իբրև խոստովանութիւն, նշում է նաև «հասարակ ժողովրդի» նկատմամբ գործ դրած ճնշումներն ու անլուր շահագործումը: Այդ տողերը ներհնչուվելով Ողբ-դամբանականին՝ վերջինիս ընծայում են վավերական կարևորություն և որոշակի արժեք. «...ռամիկք ժողովուրդք ամենայն, որք հակառակապէս ընդ հնազանգութեամբ անկեալ էիք կարկամեալ մեղօք անարժան ձեռաց իմոց», և տառապում «անթիւ, յանհաշիւ, յանվճար, յանողորմ զրկանաց մերոց...»⁴⁶, Այնուհետև հեղինակը խոստովանում է աստվածային հրահանգների (այն է՝ «զորք և զայրիս և զճանապարհորդս (շ)կողոպտելոյ, վասն ի յանիրաւութենէ և ի զրկանաց և յափշտակութենէ շմեծանալոյ կամ ի շինուածս մեծամեծս (շ)շինելոյ... յօտար արտասուաց որբոց, ալրեաց և ի հարկատու շինական մարդկան լաւագին հառաչանաց»⁴⁷ պատճառ չդառնալու) նկատմամբ իր քամահրանքն ու հանցավոր անտարբերությունը: Անդրադառնալով բարոյական հայտնի պատգամին՝ «Մի ցանկանայցես իրաց ընկերի քո և մի յանիրաւութենէ մեծանայցես, զի մի ի կէս աւուրս թողցես զնոսա» (հմմտ. Հոովմ. ԺԳ 9), նա խորապես գիտակցում և ավաղում է, թե «ապարանքն մեծամեծք գեղեցիկ շինոածքն և քաղաքն, որ յանիրաւութենէ և ի զրկանաց և յալլոց ի հառաչանաց և յարտասուաց սկսաւ շինել, ոչ ևս են բնակելոց ի նոսա... գիտէի, զի ոչ էր պարտ պարսաւել, դատել կամ բամբասել զոք...»⁴⁸: Վերջում, խոսքն

⁴³ Մատթէոս Ուռհայեցի, էջ 384. հմմտ. էջ 378. Նաև՝ Սաղ. լէ 2, Զ 2, Հովհ. Ը 46:

⁴⁴ Մատթէոս Ուռհայեցի, էջ 384: Այս մտայնութեան ցայտուն արտահայտութիւնն են ասորական մատենագրութեան մեջ Կեղծ Յովա Սուրիտի (Սյունակյացի՝ VII դ.) և Միք. Ասորու ժամանակագրութիւններում տարտղնված ողբական համաքննութիւն հատվածները. տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին. Ասորական աղբյուրներ», Ա. Խարզ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Հ. Գ. Մելքոնյանի, Երևան, 1976, էջ 126—127, 151, 154, և Տե՛ր-Պետրոսյան, Ներսէս Շնորհալու «Ողբ Եղեսիոյի»-ն և ժամանակի ասորական գրականութիւնը (սերսես Շնորհալի, հոդ. ժող.), Երևան, 1977, էջ 205—210. հմմտ. Ա. Կորթ. ԺԱ 32, Բ. Մնաց. ՂԴ 25, Դ. Թագ. ԻԲ 17: Գրեթէ նույն միտքն է կրկնվում Դավթակ Քերթոզի ողբում ևս. «Բարկացուցաք զԱրարիչն գործովք մերովք». տե՛ս «Պատմութիւն Աղոռնից, արարեալ Մովսիսի Կաղանկատուացոյ», Փարիզ, 1860, էջ 356:

⁴⁵ Պ. Խաչատուրյան, նշվ. աշխ., էջ 30—31:

⁴⁶ Մատթէոս Ուռհայեցի, էջ 381:

⁴⁷ Նույն տեղում, էջ 382. հմմտ. Ողբ Երեմիայ Գ 35—36:

⁴⁸ Մատթէոս, Ուռհայեցի, էջ 383:

ուղղելով իշխող դասին, ավելացնում է. «Եւ արդ զիտելով զայս ամենայն, զգուշացարուք անձանց ձերոց, ով բռնաւորք և իշխանք, զի բռնաւորաց՝ բռնաւորագոյն և անաշառ դատաստան լինելոց է աստ և ի կատարածն»⁴⁹:

Խոսելով «սատանայական մեղքերից» այսրաշխարհային կյանքում ձերբազատվելու անհրաժեշտութեան մասին, Բարսեղ Մարաշեցին պախարակում է այն մարդկանց, որոնք «ոչ փութան և ոչ շտապով ի բաց ընկնուն, այլ օր ըստ օր է ի նոյն հաւելուն աճեցուցանել զմեղսն... որոց ներէ Արարիչն, այլ նախ խրատէ պատուհասիւք՝ արկանելով մի անգամ և երկիցս, և իցէ որոց բազում անգամ, և ապա որք հաւելուն ի խստութիւն սրտից իւրեանց ընդդէմ խրատուն, կորուսանէ իսպառ և բառնայ ի կենաց աստի՝ զի մի աճեցեալ բազմացի շարն ի կորուստ նորին և բազմաց»⁵⁰: Որպեսզի ժամանակի ընթացքում, «սպարսավելի ընթացքի պատճառով», մեղքերն անխուսափելիորեն շկուտակվեն և դրանով պատճառ չդառնան առավել մեծ հանցանքների, մխիթարում է դամբանագիր բանաստեղծը, Աստված կյանքից զրկում է այդպիսի մարդկանց⁵¹, Սգերգային ստեղծագործութեան մեջ (որպիսին է տվյալ պարագային Բարսեղ Մարաշեցու դամբանականը) մխիթարութիւնն, իբրև գեղարվեստական հնարք, ողբական պոետիկայի կարևորագույն դրսևորումներից է դառնում: Բարսեղ վարդապետի խնդրո առարկա ստեղծագործութեան մեջ գեղարվեստական այգ հնարքի կիրառումը որոշակիորեն աղբրավում է քերականական մեկնություններում ողբին կամ ողբերգությանը, որպես դամբանական գրատեսակի, տրված բնորոշումների հետ: «Ողբերգութիւն մխիթարական ասէ,— դրում է Ստեփանոս Սյունեցին,— զորս ի վերայ մեռելոց կամ այլ ինչ թշուառութիւն կրելոց առնեն»⁵², Առաքել Սյունեցին ևս, համաձայնելով Ստեփանոս Սյունեցու այս բացատրություն-սահմանումին, երևույթի առավել ամբողջական սահմանումն է տալիս. «Ողբերգութիւն զսգաւորաց մխիթարելն ասէ, իսկ քաջութեանի գլորդորելն ասի. այսինքն յառաջ սգալ զմեռեալն և յետոյ մխիթարելն և յորդորել...»⁵³: Գեղարվեստական իր համակառուցի մեջ ողբական պոետիկայի կանոնակարգած նույն այս սկզբունքով է կառուցված նաև Բարսեղ Մարաշեցու Ողբ-դամբանականը:

49 Նույն տեղում, էջ 390:

50 Նույն տեղում, էջ 378:

51 Դամբանական գրականության մեջ այսօրինակ մխիթարության դասական նմուշ է նորստեփկյան իմաստասիրության հայտնի սյուններից Սենեկայի՝ Մարցիանին հղած թղթի համաբնույթ հատվածը. տե՛ս Н. X. К е р а с п и н, О жанре и композиции „Consolatio ad Marclam“ Сенеки („Язык и литература античного мира“, вып. I, М., 1977, с. 99):

52 Н. А д о н ц, նշվ. աշխ., էջ 193, CXLIH.

53 Նատենադարան, ձեռ. № 1100, էջ 206ր. հմմտ. Ծ ա ա յ ի ն չ ե ղ ի, Վերլուծութիւն քերականութեան, աշխատ. ի. Խաչերյանի, Երևան, 1966, էջ 72, Հո վ հ ա ն ն է ս Պ յ ու ղ Ե Ր Ղ Ն Կ ա Յ Ի, Հաւաքումն Քերականին մեկնութեան, ձեռ. № 2193, էջ 33ա, 2380, էջ 51ր, Հո վ հ ա ն ն է ս Ծ ո Ր Ժ ո Ր Ե Յ Ի, Տեսութիւն Քերականի, ձեռ. № 2380, էջ 251ա: Մխիթարութեան և խորհրման. իբրև բարոյա-աստվածաբանական ու հոգեբանախոսական երկու հարակցված, մեկը մյուսով պայմանավորված երևույթների (ողբի, դամբանականի մեջ) պարտադիր կիրարկվելու մասին էր խոսում տակավին Հաճախապատում ճառերի հեղինակը. տե՛ս «Սրբոյ Հօրն մերոյ Երանելոյն Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ճառք լուսաւորեց, Վարդապատ, 1894, էջ 126, 291:

Ողբական հերոսի գիմանկարի կերտման սկզբունքի տեսակետից Դավթակ Քելթողլի և Բարսեղ Մարաշեցու ստեղծագործությունները կարող են ուշագրավ լինել ինչպես ժանրի թելադրած ընդհանրություններով, այնպես էլ ներժանրային ինքնահատկություններով. թե՛ Զվանշիրի, թե՛ Բալդուինի համար հատուկ է իմաստությունը, կորովը, բաշտությունը, ուժը, պարկեշտությունը. մակգիրներ, որոնք սեփականվում և համապատասխան կիրառություն էին ստանում քրիստոնեական միջնադարի գեղագիտական ընկալումների պինանոցից: Եթե Դավթակ Քերթողլը նզովքի շիկացյալ մտրակով խարազանում է վատուժ մարդասպանին, ապա Բարսեղ վարդապետը, որպես հոգևոր միաբանության առաջնորդ, օգտագործում է համեմատաբար զուսպ արտահայտություններ, որոնք հանգում են բարոյախրատական ընդհանրացնող հրահանգի: Երկու ստեղծագործություններում նկատառելի այս տարբերությունը հետևանք է նաև այն բանի, որ Դավթակ Քերթողլը, ճանաչելով մարդասպանին և ի մտի ունենալով դավադրության փաստը, նրա վրա է թափում իր ողջ զալրույթը: Մինչդեռ Բարսեղ Մարաշեցին (և ոչ միայն նա) չդիտեր մարդասպանին, որովհետև, ինչպես հայտնի է, Բալդուինը սպանվել էր մարտում, անհայտ մեկի կողմից: Թերևս այս է պատճառը, որ մարդասպանի հասցեին ասված խոսքերը Մարաշեցու մոտ մեղմ բանադրանքի երանգ են ստանում՝ հարցականների հարակրկնությամբ, որ գործին հաղորդում է ինքնատիպ հուզականություն. «...ո՞ր ձեռք անփոփեցին զհաստաձեղց պնդութիւն կարծեցելոյ ձեռաց հղօրին կամ ո՞ր բազուկ տկար խոնարհեցոյց զանաանելի բազուկս անուանի քաջին կամ ո՞ր առն ի զօրականաց ի թլպատելոցն ղօրութիւն զօրեաց խորտակել... և ո՞ր կատաղեցելոյ գագանի սիրտ ոչ խանդաղատեցաւ գեղեցկութեամբ նորա... և հի՛մ ոչ ձայնեաց նմա զո՞վ տք իցեսն դու կամ ուստի՞...»⁵⁴: Այս համակրկնությունը իր զուտ ձեական-տիպաբանական ակունքներով առնչվում է Գրիգոր Նարեկացու խոսքարվեստին և մերձավորագույն կետեր հայտարարում «Մատյան ողբերգության» Բ և ԻԾ բաների հետ: Սակայն նույնքան նկատառելի է թվում և այն, որ սգերգային հարցերի այսօրինակ հարակրկնությունն որոշակիորեն աղերսվում է ժողովրդական լալիքում կենցաղավարող համարնույթ ձևերին⁵⁵:

Ողբացյալ իշխանին ուղղված պատգամներն ու խրատներն ու սպառնական հիշեցումներն ապաշխարության մասին ի դերև են դուրս եկել: Ահա այս է պատճառը, որ հեղինակն ասում է. «...դատախազ ես ինձէն լինիցիմ դատապարտ անձին իմոյ և արդարացուցանեմ զԱրարիչն, զի թէ փոքրագուռիքն, զոր էած ի վերայ իմ հարուածս վիրաց մարմնոյ, և տարածամ մահու բարձումն կենակից կնոջ ծննդէք իւրոց, և որ սոցին նմանս, յօտարաց մարմինս խրատ խրատեալ էր իմ փոխադրելով ի բարիս՝ ոչ հասանէի յաններելի չարիս. այլ զի գանեցայ և ոչ խրատեցայ, հաւայ և ոչ բժշկեցայ»⁵⁶: Ընդգծյալ հատվածը, որ բանաձևումն է կրոնաբարոյական նախընթաց խորհրդածության, ինչպես երևում է, պատշաճ մի տուրք էր ողբագրական պոետիկային առհասարակ: Ողբական զգացումի դրսևորման գեղարվեստական այս ձևը՝ շարահարական, կառուցվածքային, ինչպես նաև

⁵⁴ Մ ա տ թ է ո ս Ո լ ո հ ա յ լ ց ի, էջ 376:

⁵⁵ Հմմտ. Սոփիի ողբասացությունը. «Թովմայի վարդապետի Աթոռունտյ Պատմութիւն Տանն Աթոռունեաց», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 266:

⁵⁶ Մ ա տ թ է ո ս Ո լ ո հ ա յ լ ց ի, էջ 384:

գեղագիտական իր խորքով, սակայն պատահական մի երևույթ չէր: Այն ոճապոետիկական իր նկարագրով որոշակիորեն աղերսվում է «Մատյան ողբերգության» կՊ բանի հետևյալ տողերին. «...արևու ծագեալ և ոչ լուսաւորիմ, մեղր ճաշակեմ և ոչ քաղցրանամ, ռետնիւ լնանիմ և ոչ բժշկեմ, միշտ կանխեմ ի նոյն և դատարկ երևիմ, ճանապազ ձաղիմ և ոչ երբեք խրատիմ, ողորքիմ դարձեալ և ոչ զգաստանամ»⁵⁷:

Ողբագիր հեղինակի այս գործը ուշագրավ է նաև մեկ այլ աղերսով: Այն բնորոշվում է ոչ միայն իր սեռին հարադատ հիշյալ առանձնահատկություններով, այլև այնպիսի բաղադրատարրերով, որոնք ստեղծագործությունը դարձնում են ինքնատիպ ու արժեքավոր: Խոսքը Ողբում երկու այլադան ժանրերով (վարք և աղոթք) գրված հատվածների մասին է: Հատվածներ, որոնք, սակայն, ագուցվելով բնական շարադրանքին, չեն խախտում Ողբի ընդհանուր ժանրային նկարագիրը: Թերևս այս հանգամանքը նկատի ունենալով է, որ Բարսեղ վարդապետի այս գործը Ղ. Ալիշանի կողմից ամենայն իրավամբ գնահատվել է որպես «Հայ մատենագրութեան մէջ նշանաւոր նորածն»⁵⁸ գրվածք: Վարքագրական-վկայագրական դրվատիքի մի գեղեցիկ նմուշ է Բալդուինի գինական ընդունակությունների ու գործելակերպի տարփողումը, որը մտահոգման փր ընդհանրությամբ թերևս աղերսվում է Նդիշեի «Վարդանանց պատմության» հատվածներից մեկի հետ: Հանդիպադրենք հարաբերակից հատվածները.

«...դարձեալ և զմի մի ի նոցանէ (Վարդան Մամիկոնյանը—Ղ. Ք.) քաջալերէր ի ծածուկ և սրտապնդէր, և զամենայն պակասութիւն աղքատութեան լնոյր: Որոյ ոչ ինչ գոյր զօրականին, յանձնէ և յընկերաց մատուցանէր, որոյ զէն չէր, զէն պատրաստեր, և յորում հանդերձ պիտոյ էր, հանդերձ զգեցուցանէր, և որում երիվար պիտոյ էր, երիվար տայր...»⁵⁹:

«...մարզէր զգօրսն ամենայն, չորդորէր, սրտապնդէր, քաջալերէր իբրև զյաղթող ըմբիշ և զքաջ նահատակ, շուրջանակի զօրացն անցանէր, ուժգին և ահարկու ձայնիւ ամրացուցանէր զգօրսն ամենայն. ձայնէր առ ամենեքեան յանուանէ զանուն քաջութեան.

....Եւ իբրև այսպէս զօրացուցանէր, հաստատէր զարտաքոյ կողմանս բանակին, դարձեալ ի միջոց անդ զօրացն մտանէր, զլքեալսն երկիւղիւ և զխուսափեալսն թագստեան յառաջ քաշէր և զքաջասիրտն գովէր, զի քաց ընկեցեալ զգէնսն յանարի արանցն, կամ որք ունէին կարկամեալ ցամա-

57 «Փրիգոր նարեկայ վանից. վանականի Մատեան Ողբերգութեան», Զմիւռնիա, 1870, էջ 262. հմմտ. «Բանք աստուածայինք պիտանիք ամենայն կրօնաւորաց Անանիայի հայոց վարդապետի ասացեալ» (Մատենադարան, ձեռ. № 2680, էջ 508ր):

58 Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 368 (տողատակ): Տարբերույթ ժանրերի սինկրետիկ համակցման այս հնարքն իր առավել բնորոշ դրսևորումն էր գտել վաղրյուզանդական մատենագրության երևելի մշակներից՝ Փրիգոր նագիանդացու՝ Բարսեղ կեսարացոյն նվիրված հայտնի «Դամբանականում», К. М. Мурadian, Древнеармянский перевод «Эпитафии» Григора Назианзина («Кавказ и Византия», вып. 2, Ереван, 1980, с. 155).

59 «Նդիշեի վասն Վարդանին և հայոց պատերազմին», ի լոյս ածեալ բաղադրականամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տեր-Մինասեան, Երևան, 1955, էջ 104:

քեալ ձեռս, յափշտակէր կորզէր և արիացելոցն մատուցանէր ի ձեռին. ոմանց տայր, ոմանց առնոյր...»⁶⁰:

Հատվածների բաղդատումից պարզվում է, որ Բարսեղ Մարաշեցին ծանոթ լինելով Նղիշեից բերված հատվածին, այնուամենայնիվ երևույթի առավել ամբողջական պատկերագծման տեսակետից մնացել է ինքնուրույն: Նույնքան հատկանշական է աղոթագրական ընդհանուր ավանդույթին մերձիմոտ «Հայր երկնաւոր մեղայ յերկինս և առաջի Քոգթայ յիս և վերաբերեալ յայտնեա զկորուսեալս, կենդանի կամ մեռեալ, մեռելոց և կենդանեաց Աստուած...»⁶¹ սկիզբ և վերջ ունեցող աղոթք-խնդրվածքը, որն իր հերթին, ինչպես կտեսնենք, ընդհանրության եզրեր ունի աստվածաշնչական պոետիկայի հետ, ընդհանրություն, որ հատուկ է ոչ միայն այս, այլև առհասարակ քրիստոնեական միջնադարի գրեթե բոլոր երկերին: Սակայն հեղինակը կարողանում է իրեն հատուկ հատկությամբ օգտագործել սուրբգրական պատկերային համակարգը: Աստվածաշնչից ծագող գրական այգ հնարներն այստեղ սոսկական բանաբաղում չեն արդեն, այլ գեղարվեստական ինքնակայության հավակնող ձևեր, որոնք ծնունդ են առել ստեղծագործական կենդանի գործընթացում: Բերենք դիտարկվածը լավագույնս մատնանշող թեկուզ երկու նմուշ.

«Անդունդք ասացին թէ չէ առ իս եւ ծով ասաց թէ չէ ընդ ինեւ» (Յովբ ԻԴ 14):

«...դի ծով աղաղակէ, թէ ոչ է աստ, և երկիր գոչէ, թէ ոչ ծածկեցաւ ընդ հողով ի ծոց իմ» (Մա տ թէ ո ս Ու ու հ ա յ ե ց ի, էջ 375):

«...որպէս խորտակի աման խեցեղէն՝ որ ոչ կարիցէ միւս անգամ բժշկել» (Նրեմ. ԺԹ 11) «Եւ կործանումն նորա եղիցի իբրեւ զբեկումն խեցեղէն անօթոյ բրտի՝ մանր խորտակելոյ, զի մի որ գտանիցէ ի նմանէ» (Սաայի Լ 14):

«...և ընկղմեալ խորտակեցայ որպէս խեցեղէն անօթ կորուսեալ» (Մա տ-թէ ո ս Ու ու հ ա յ ե ց ի, էջ 385):

Դամբանականում քիչ չեն նաև բանաստեղծական ճաշակով ու նրբին հուզականությամբ թաթալուն հատվածները, որոնք աչքի են ընկնում ապրումի անկեղծությամբ: Ի դեպ, հատկապես այդ հատվածներում է, որ երեւան է բերվում Բարսեղ Մարաշեցու լեզվական բարձր կուլտուրան: Ողբագիր բանաստեղծի հոգեկան խռովքի ու տրտմության մասին են խոսում հետևյալ տողերը. «...և զառ ի բազմաց ծանուցեալն յիմաստութիւն ի զօրութիւն և ի յասակ, ի տեսակ և ի քաջամարտիկ յաղթութեան և ամենայն կիրս անցաւոր կենցաղոյս, ուստի ճանաչի մեծանձնութիւն գովութեան իշխանացն, յաւելորդ վարկանեմ երկայնել զբանս, զի մի ստգտանիցիմք ի պարսաւադէտ ատողաց նորա, այլ աւաղ ասեմ անբախտ կորստեան նորա և անյաջողակ ճանապարհին, զոր բազում անգամ զեկուցաք ոչ գնալ զանդառնալի ճանապարհն զայն»⁶² Կամ՝ «...ամենայն արարածք խեթիւ և խոժոռ դիմօք հային

⁶⁰ Մա տ թէ ո ս Ու ու հ ա յ ե ց ի, էջ 390—391:

⁶¹ Նույն տեղում, էջ 385—388:

⁶² Նույն տեղում, էջ 376—377:

ընդ իս, զի թէ մահ փախեալ յինէն և կեանք հեռացաւ, երկիր զարհուրեալ յահաւոր քո հրամանացդ՝ ոչ ընկալաւ զիս ի ծոց իւր և ոչ ետ, տեղի գերեզմանի⁶³, զի կարգայցեն զանուն կորուսելոյս ի հող ուրեք. արդ եթէ անզգայ և անբան տարերբս զարշեցան, մերժեցան և ի բաց ընկեցին զիս յարարածոց աստի. ո՞վ այլ ոք ի մարդկանէ իցէ որ ողորմեսցի ինձ»⁶⁴:

Ողբական ղգացումով են համակված գամբանականի վերջնամասում զետեղված հետևյալ սրտաճմլիկ տողերը. «Զայս ամենայն դառն և անհնարին կորուստ յորժամ տեսնեմ հասեալ ի վերայ նորա, ոչ գիտեմ զինչ արարից կամ որպէս օգնեցից, ձեռն կարկառելով ընկղմեցելոյ սիրելոյն»⁶⁵: Երբեմնի խրոխտ և մեծազոր Բաղդուխից, որ տերն էր Անտիոքից մինչև Մելիտինե ձգվող իշխանության, այժմ մի հիշատակ անգամ չի մնացել, որ կարողանա վիպել վաղանցիկ փառքերն ողբացյալ իշխանի. «...և տեղի ոչ ուրեք երևեցաւ գերեզմանի նորա ...այժմ ի մեռեալս ոչ յիշատակի և ոչ ի կենդանիս երևի, ոչ զանգակ որ նմա հնչեցուց, ոչ յիշեցաւ անուն նորա յեկեղեցի ուրեք և ոչ նուեր պատարագի կամ մասն յիշատակի ողորմութեան ել նմա յերկրէ աստի ու մի կամ դանգ ինչ, որ կարի աղքատագունիցն հասանէ»⁶⁶:

Ժանրային, լեզվամշակութային այս և նման այլ իրողությունները թույլ են տալիս Բարսեղ Մարաշեցու այս ստեղծագործությունը դասել ոչ միայն գամբանական գրականության, այլև, առհասարակ, հայ միջնադարյան գեղարվեստական արձակի ուշագրավ արտադրանքների շարքում:

ПЛАЧ-ЭПИТАФИЯ БАРСЕГА МАРАШЕИЦИ

АКОП КЕСЕЯН

Резюме

Плач-эпитафия настоятеля дразаркской конгрегации вардапета Барсега Марашеци посвящена владыке Кесуна и Мараша—принцукрестоносцу Балдуину. Плач был написан в 1146—1147гг. Этот литературный памятник дошел до нас в «Хронологии» Маттеоса Уршаеци.

В жанровом плане эпитафия Барсега Марашеци представляет собой своеобразное явление среди подобного рода произведений армянской средневековой литературы: в нем переплетаются такие жанры древнеармянской литературы, как агиография, молитва и т. д.

⁶³ Հմմտ. Յովր Ժէ 1, Բ Մակ. Ե 10:

⁶⁴ Մատթէոս Ուրշայեցի, էջ 388:

⁶⁵ Նույն տեղում, էջ 394:

⁶⁶ Նույն տեղում, էջ 394: Ուշագրավ է, որ Միքայիկ Ասորին ևս վկայաբերում է իշխանի (Ժանանկագրության հայերեն թարգմանության մեջ բացակայող) անհիշատակ կորստյան փառաբ. տե՛ս „Chronique de Michel le Syrien“, éd et trad. par. J.-B. Chabot, vol. III, p. 270—272.